ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2809-Ա « 01 » հունիսի 2026 թ.

ՌՈՒԲԵՆ ԱՐԱՅԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասի 4-րդ կետով, 112-րդ հոդվածի 2.1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով և հիմք ընդունելով «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 8.1-ին կետը, 8.3-րդ կետի 7-րդ ենթակետը, ինչպես նաև Ռուբեն Գրիգորյանի դիմումը՝

1.Ռուբեն Արայիկի Գրիգորյանին՝ 2026 թվականի հունիսի 2-ից ազատել «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2023 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.«Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Հարություն Հարությունյանին:

3. Աշխատանքային վերջին օր համարել 2026 թվականի հունիսի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246